

– Իշխանք,– ձայնեց Գուրգեն,– լաւ չլինի՞ր, որ ձիանքը քշենք եւ ժամ առաջ հասնինք Նորաշէն. ձիուն վրայ մէկ քիչ բան ծամելով՝ մեր ախորժը խաբելով որպէսզի երեկոյեան լաւ ընթերնք եւ լաւ հանգչինք: Տէ՛, Վահրիճ, իշխանաց մէյ մէկ պատառիկ տո՛ւր, թէ ուտենք, թէ երթանք:

– Իշխանաց ոչ հացի պատառիկը եւ մսի պատառիկը միայն, այլ ահա ումպ մը գինի ալ կրնամ տալ, յիմար արաքները ամէն բան աւարե՛ գինին մոռցեր էին, Տարոնոյ պատուական գինին Է. Ս. Կարապետ իրաւ՛ Է թէ այս գինին միայն կը խմէր արքայութիւն չուղէւորած, չգիտեմ, բայց գիտեմ թէ ես իմ տիկս ասկից լեցուցի:

– Տեսիմ սա գինին:

– Շնորհք ըրէ. Տէ՛ր,– ըսաւ Վահրիճ եւ բաւական մեծութեամբ տիկ մը երկնցուց իշխանին, եւ նոյն միջոցին լաւաշներ կը հանէր պայուսակէն եւ միսի կտորին հետ կը բաժնէր ամենուն. իսկ Գուրգէն քմծիծաղով.

– Զո Ս. Կարապետի գինին լաւ է, բայց պետք էր այդ տիկը ամբողջ լցնել եւ դու անհոգ գտնուէր ես, Վահրիճ:

– Ո՛չ, Տէր, ես ամբողջ լցուցի, բայց ցուրտին գինի՞ կը դիմանայ, կեցած տեղ կը պակսի...

Այս հրաշքին վրայ ծիծաղելով՝ սկսան քշել ձիանքը, եւ չի մթնցած հասան Նորաշէն, որ բաւական մեծութեամբ գիւղ մ'էր ան ատեն, եւ գիւղացիք տեսնելով իշխանագուն մարդիկ մեծարեցին զանոնք ըստ իրենց կարի, հայկական հիւրասիրութիւնը չափեն աւելի ի գործ դնելով: Աւելորդ է ըսել թէ մեր Վահրիճի տիկը սմբեցաւ բոլորովին, ի մեծ ցաւ իրեն եւ յուսահատութիւն ամենուն:

Մութ էր դեռ, երբ Գուրգէն ամենուն զարթեցուց եւ լուսնի լուսով հասան Դատուան, եւ առանց թոյլ ու դադար տալու կ'անցնէին կ'ոլորուէին Վանայ ծովուն շուրջը, եւ այսօր իշխանը ոչ կը խոսէր, ոչ